

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

ՀԱՅ ՏԱԹԵՐԻ ԳԻՒՏԻ 1500 ԵՒ ՏՊԱԳ-
ՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵՆԱԿԻ ՅՈՒՅԵԼԵԱՆԸ
ՏԱՐՕՆԻ ՄԷՋ

Մուտ, 3 յուլիսի

Ամպերի մէջէն արեւ, փշերի մէջէն՝
փարզ, թռչների միջէն՝ մեղր—այս է
բնութեան հրաշալի հակադրութիւննե-
րէն մէկը: Արատասունքի մէջէն ժպտա
—այս է մարդկային կոմքի ուժի
չափը: Եւ երբէր զարմանալի չպիտի
իւայ, երբ ստանկահայերը, հակառակ
չըջագասող փոթորիկներին, հնարա-
ւորութիւն կունենան իրենց շուրջը
նայել և արտասունքի միջէն ժպտիլ:
չէ՛ որ այլապէս նա կորսնցուցած կը
լինէր իր կոմքի ուժը, զրկւած կը
լինէր կենսաունակութիւնէ, և ուրախ
ենք որ հակառակ յոռեանների են-
թադրութիւններուն՝ տանկահայը զի-
տէ՛ և՛ ապրել և՛ մեռնել, և՛ լալ և՛
խնդալ...

Հայկական տառերի և սպազրու-
թեան զիւտի Եօրեխանական մեծ
տօնը Տարօնի մէջ կը հաստատէ վե-
րոյշիշալ կարծիքը: Համազգային այդ
մեծ տօնը չի կրնար և չպէտք է որ
աննկատելի անցնի Տարօնի մէջ, ուր
թաղւած են այդ տօնի նշանաւոր հե-
րօտները, որտեղից ծնունդ են առն
անուք ուր եղած է անոնց զործելու
կենդանութեամբը:

Հակառակ սրբազային՝ այսօրայ
Տարօնցին չէր ըլլար իր նախնիքների
արժանաւոր ժառանգը: Հակառակ տի-
րոզ աննպաստ պայմաններին, Տարօն-
ցին արդէն ձեռնարկեր է հնարաւոր
եղածի չափ արժանաւայել կերպով
տօնելու հայ քաղաքակրթութեան և
զրահանութեան լոյսի փօս եղած այդ
կրկնակի տօնը և մամուլով մը յաւեր-
ժացնելու այդ մեծ օրը:

Յունիսի 29-ին, շաբաթ օր, Ս.
Թարգմանչաց վանքի մէջ Մ. Խորե-
նացու, Դուիթ-Անյաղթի, Սաւփանոս
Ասողկի և այլ թարգմանիչների գերեզ-
մանների վրայ առաջի անգամ կատար-
ւեց մեծ տօնը նախագահութեամբ ս. ա-
ռաջնորդ Ներս. եպիսկոպոսի, ներկա-
յութեամբ յորեխանական յանձնա-
խմբի և խումն բաղմութեան: Զգես-
տաւորւած եկեղեցական զասը թափօր
կազմելով՝ կանգ առաւ թարգմանիչ-
ների գերեզմանների մօտ, որոնք զար-
դարւած էին լիարժ կանաչներով ու

ծաղիկներով: Հոգեհանգստէն յետոյ
առաջնորդ սրբազանը բացեց հանգէսը,
որից յետոյ խօսեցին օրումն ճոտա-
խօսները և արժանացան բուռն ծա-
փահարութիւններին: Հանգիսի ժամա-
նակ եկաւ Մշոյ զինւորական պետը
երաժշտախմբով և զինւորներով. գոհ
մնաց կատարւած հանդէսէն, զրաւե-
րով հայ ժողովրդի ստեղծագործող հո-
գին, անոր անձնութիւնը հայրենի-
քի և պետութեան համար, ցանկաց
համերաշխութիւն օսմանեան բոլոր
տարրերի մէջ, որով կարելի կըլլայ
յառաջագիմել և այլն: Մէջ ընդ մէջ
կերպէին աշակերտներ և կը նւագէր
զինւորական նւագաձուներու խումբը:

Հանդէսէն յետոյ առաջնորդը, զին-
ւորական պետը և զօրքը վերադար-
ձան քաղաք, Եօրեխանակ. յանձնա-
խմբի արամադրութեան տակ թողնե-
լով երաժշտախումբը, որ նւագեց մին-
չե լոյս. միւս կողմն էլ ժողովրդական
դահուլ-զուռնան կը նւագէր և պարե-
րը կը շարունակէին թուրքերէն ներ-
կայ էին մի ուսուցիչ և մի բանի քա-
ղաքացիներ: Ուտիկանութիւնը կը բա-
ցակայէր: Իսկապէս շնորհակալութեան
արժանի է Մշոյ զինւ. պետ—փաշան,
որ ամեն աթիւ սրոյց է տւեր իր լու-
սաւոր միտքը և բարեմասնութիւնը:

Յաջորդ հանդէսը պիտի կատարուի
Վարդապատին ս. Կարապետի վանքի
մէջ և սպա Սահակ Հայրապետի գե-
րեզմանի վրայ՝ Աշտիշատ:

Աբէլ